Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ -ի **EduArmenia** նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման
դասընթաց **2022**

Հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝ Բանավոր խոսքի ուսուցումը որպես հաղորդակցման միջոց

- ☒ Մենախոսություն
- ☒ Երկխոսություն
- ☒ Դերային խաղ

Հետազոտող ուսուցիչ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՈՆԻԿ ԲԱԲԿԵՆԻ

ԴՊՐՈՑ՝ ՀՐԱԶԴԱՆԻ **N1** ԱՎԱԳ

ԱՌԱՐԿԱ՝ ՖՐԱՆՍԵՐԵՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Բանավոր խոսքի ուսուցումը որպես հաղորդակցման միջոց--------4

Մենախոսություն----------5

Երկխոսություն----------8

Դերային խաղ----------12

Եզրակացություն----------14

Օգտագործված գրականություն----------15

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ աշխարհը բազմալեզու է և քանի որ ամեն լեզու մի ուրույն ազգային մտածողության ու մշակույթի խտացած պատկեր է, ապա բնական է, որ այս բազմազանությունն իր ողջ գեղեցկությամբ ու հետաքրքրությամբ հանդերձ, որոշակի խոչընդոտ է ստեղծում մարդկային արդյունավետ հաղորդակցման համար:

Իհարկե, աշխարհի մարդկությունը մեծ ջանքեր է գործադրում այս խոչնդոտը հաղթահարելու համար, մարդիկ ակտիվորեն սովորում ու սերտում են օտար լեզուներ, ուսումնասիրում են այլոց մշակույթն ու ավանդույթները: Այս ամենը արվում է այն լուրջ գիտակցությամբ, որ այս մոլորակի վրա մարդիկ այլևս չեն կարող ապրել իրարից մեկուսի, որ ինքնահաստատման լավագույն միջոցը կոոպերատիվ հաստատելն է:

Թեմայի արդիականությունը.

Մեր ժամանակներում շատ է կարևորվում օտար լեզուների դերը, որը պարտավորեցնում է ավելի պատասխանատու և լուրջ աշխատանք կատարել, որպեսզի տվյալ լեզուն հասանելի լինի և մատչելի դառնա յուրաքանչյուր աշակերտի համար: Օտար լեզվով շփումը կարգավորում է անհատի վարքը, խթանում է այս կամ այն խոսքային գործունեությանը, համագործակցությանը: Օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց հանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը: Սովորելով օտար լեզու՝ դպրոցականները նախնական պատկերացումներ են ձեռք բերում տվյալ լեզվի մասին, ըմբռնում որոշ առանձնահատկություններ, որոնցով այն տարբերվում է մայրենի լեզվից, ինչը նպաստում է սովորողների ինչպես բանասիրական մտահորիզոնի ընդլայնմանը, այնպես էլ մայրենի լեզուն լավ իմանալուն:

---

Բանավոր խոսքի ուսուցումը որպես հաղորդակցման միջոց

Բանավոր խոսքը լեզվի կարևորագույն բաղադրամասն է: Այն օժանդակում է կարդալու, գրելու և լսելու ունակությունների զարգացմանը: Հաղորդակցումը կատարվում է հնչյունային կենդանի խոսքի շնորհիվ:

Դպրոցում ուսուցումը կառուցվում է հաղորդակցման սկզբունքի հիման վրա: Այժմ, դպրոցում բանավոր խոսքը օտար լեզվի ուսուցման կարևորագույն խնդիրներից մեկն է: Այն հանդիսանում է ինչպես ուսուցման նպատակ, այնպես էլ միջոց: Առանձնապես մեծ է նրա դերը սկզբնական աստիճանում, քանի որ բանավոր խոսքը կարող է ապահովել սովորողների հետաքրքրությունն ու մոտիվացիան:

ՈԽուսուցման սկզբնական աստիճանը բանավոր խոսքի նախապատրաստական շրջանն է, իսկ հիմնական խնդրի լուծումն իրականացվում է հաջորդ աստիճաններում, երբ սովորողները տիրապետում են բառերի որոշակի քանակի, որը նրանց հնարավորություն է տալիս արտաբերել ոչ միայն առանձին նախադասություններ, այլ նաև կառուցել կապակցված խոսքի հատվածներ:

Եթե ուսուցման սկզբնական աստիճանում բանավոր խոսքի զարգացումը որևէ ստեղծագործական աշխատանք չի պահանջում, ապա հետագայում այն սովորողից պահանջում է մտածական մեծ ակտիվություն:

Բանավոր խոսքը հոգեբանական բարդ պրոցես է, որն ունի երկու կողմ. ունկնդրել/ռեցեպտիվ/ և խոսել ռեպրոդուկտիվ:Խոսելը որպես խոսքային գործունեության ինքնուրույն տեսակ՝ ունի իր միջոցները և իրականացման եղանակները: Խոսքում լեզուն օգտագործվում է որպես մտքի ձևավորման և ձևակերպման սոցիալապես մշակված միջոց:



Բանավոր խոսքի ռեպրոդուկտիվ կողմը հաղորդակցական երկու կողմ ունի՝ մենախոսություն և երկխոսություն:

## ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Մենախոսությունն ըստ լեզվաբանների սահմանման խոսքի կազմակերպված ձևն է, որն իրենից ներկայացնում է մեկ անձի խոսքն ուղղված որևէ լսարանի: Այն խոսքի ակտիվ և ազատ ձև է. Դրա իրականացման համար խոսողն արտահայտում է որևէ բովանդակություն, որի հիման վրա կազմում է արտահայտությունը: Մենախոսությունը սովորաբար լինում է նախապատրաստված, որովհետև այն պլանավորվում է և ծրագրավորվում:

Լեզվական և ոչ լեզվական միջոցների ընտրությունը պայմանավորված է հաղորդակցման իրադրությամբ և խոսողի անհատական առանձնահատկություններով, նրա կրթական մակարդակով, հուզական վիճակով և այլ գործոններով:

Մենախոսության ընթացքում խոսողն ինքն է որոշում արտահայտության ծավալը և շարադրանքի հաջորդականությունը:Մենախոսությունը ծավալվում է նախապես ծրագրավորված պլանով: Մտքերը շարադրելիս սովորողը պետք է նախապես իմանա,թե ինչի մասին է խոսելու:

Մենախոսությունն ունի հաղորդակցման հետևյալ ֆունկցիաները:

1.Ինֆորմատիվ՝ նոր ինֆորմացիայի հաղորդում՝ առարկաների, երևույթների, իրադարձությունների նկարագրություն:

2. Ներգործող՝ համոզմունքի, մտքի, վերաբերմունքի հիմնավորում:

3. Հուզազգացմունքային ներգործություն:

Մենախոսություն ուսուցանելիս անհրաժեշտ է գործածել լեզվական ծանոթ նյութ և ձևավորել այդ նյութը կապակցելու և տրամաբանական ինքնուրույնության հաղորդում կազմելու կարողություններ:

Մենախոսության ուսուցումը կարող է ընթանալ հետևյալ փուլերով.

- Առաջին փուլի վարժությունների նպատակն է տարբեր խոսքային նմուշների գործածումը տվյալ թեմայի շուրջ, այսինքն՝ ըստ թեմայի մեկ ավարտված միտք արտահայտելու կարողության զարգացումը:

Այսպիսով մի կողմից սահմանվում է խոսքային նմուշների հաջորդականությունը, մյուս կողմից, տրվում են տարբեր մոդելներով կազմված նախադասություններ, որոնք կազմում են տրամաբանական ամբողջություն:

Այլապես շատ հաճախ աշակերտների երևույթների մեջ դիտվում է միապաղաղություն և խախտվում է մտքերի միջև եղած տրամաբանական կապը:Առաջին փուլում աշակերտների առջև դեռևս դրված չէ իրենց մտքերն ինքնուրույն արտահայտելու խնդիրը: Այս փուլում հնարավոր չէ առանց նախապատրաստվելու կազմել տրամաբանորեն միմյանց շաղկապված երևույթներ: Այդ իսկ պատճառով ուսուցիչը չպետք է շտապի և պահանջի աշակերտներից անմիջապես խոսել թեմայի շուրջ:

- Երկրորդ փուլում ուշադրության կենտրոնում է գտնվում նախադասությունների միջև եղած տրամաբանական կապը: Աշակերտները կազմում են երկուսից ավելի նախադասություններ: Մեկը լրացնում է մյուսին, բացատրում և հիշեցնում առաջին նախադա-սության մեջ արտահայտված միտքը,այսպիսով մտքերի մեջ առկա են պատճառահետևանքային կապերը:Շատ հաճախ ուսուցիչները ձգտելով օգնել աշակերտներին հարցեր են առաջադրում նրանց: Այդ դեպքում նրանք շեղում են աշակերտների ուշադրությունն ու միտքը դեպի երկխոսությունը: Բացի դրանից հարցերն ու պատասխանները որպես կապակցված խոսքի հիմք , կանգնեցնում

են աշակերտներին զանազան դժվար խնդիրների առջև: Այս դեպքում աշակերտները պետք է հրաժարվեն ուսուցչի հարցերից և իրենց պատասխաններով կառուցեն կապակցված արտահայտություններ:

Մենախոսության կարողությունների զարգացման երրորդ փուլը բնորոշվում է նոր խնդիրներով և ինքնուրույն արտահայտությունների ծավալի ավելացմամբ: Այս փուլում աշակերտներն իրենց խոսքում ներգրավում են դատողության և ապացույցի տարրեր, ցույց են տալիս իրենց վերաբերմունքն արտահայտված մտքի վերաբերյալ:

Մենախոսություն զարգացնելու համար, ինքս առաջարկում եմ աշակերտներին դիտել որևէ տեսաֆիլմ: Միաժամանակ տեսնելն ու լսելն, իհարկե, ավելի արդյունավետ է, քան միայն լսելը:



Տեսաֆիլմը, առաջին հերթին պետք է մոտիվացիոն նշանակություն ունենա, դրդի աշակերտին խոսել: Այս տեսանկյունից առաջին և ամենակարևոր խնդիրը ֆիլմի ճիշտ ընտրությունն է:

Աշխատում եմ ֆիլմ ընտրելիս այն լինի արդիական, համապատասխանի սովորողների հետաքրքրություններին:

Ճիշտ ընտրված ֆիլմը ոչ միայն խոսելու հարուստ նյութ է տալիս, այլև ապահովում է դասի ստեղծագործական պահը:

Տեսաֆիլմի հետ աշխատելիս աշակերտներին տալիս եմ առավելագույն չափով ազատություն: Նրանք ազատ են իրենց դատողություններում և մեկնաբանություններում:

Իմ առաջնահերթ խնդիրն եմ համարում ուղղորդել նրանց արտահայտելու իրենց սեփական մտքերը, չմիջամտելով և զերծ մնալով ուղղումներ կամ միջնորդություններ կատարելուց:

Ֆիլմի հետ աշխատանքը արդյունավետ դարձնելու համար, նախապես մշակում եմ դրա հետ աշխատելու պլան՝ որ դրվագի վրա հրավիրել աշակերտների ուշադրությունը, որ հատվածը թուցիկ անցընել, կամ առհասարակ չդիտել:

Ժամանակակից տեխնիկական միջոցները մեզ լայն հնարավորություններ են ընձեռում դասապրոցեսը արդյունավետ կազմակերպելու համար:

Ասենք՝ անհրաժեշտ պահին ֆիլմը ընդհատում եմ, եթե հարկ է միևնույն դրվագը երկու կամ ավելի անգամներ դիտելու համար: Դասարանը բաժանում եմ երեք խմբի ֆիլմը ևս բաժանում եմ երեք հատվածների: Յուրաքանչյուր խումբ դիտում է իր հատվածը: Տալիս եմ որոշակի ժամանակահատված, որպեսզի ամեն մի խումբը կարողանա շատ հակիրճ վերարտադրի իր դիտած հատվածը:

Բնականաբար 1-ին, 2-րդ և 3-րդ հատվածները պետք է տրամաբանորեն շաղկապվեն: Աշակերտներին օգնելու համար նախապես թերթիկների վրա գրում եմ իմաստային դաշտեր կազմող բառերը և բաժանում եմ նրանց:

Կամ կազմում եմ հերոսների վերաբերյալ հարցաթերթիկներ և հանձնարարում, որպեսզի ֆիլմը նայելու ընթացքում դրանք լրացնեն. Ասենք՝անունը, տարիքը, ազգությունը, ընտանեկան վիճակը, մասնագիտությունը, բնակավայրը, նախասիրությունները և այլն, ըստ ֆիլմի սյուժեի: Սա նույնպես խթան է հանդիսանում խոսքը ճիշտ կազմելու համար:

Վերոհիշյալ առաջադրանքները կատարելիս աշակերտները սովորում են իրենց մտքերն արտահայտել օտար լեզվով:

Այսպիսով, մենախոսության կարողությունները զարգացնող մեթոդական համակարգը կառուցված է մտավոր գործողությունների աստիճանական բարդացման վրա:

Բնական հաղորդակցման պայմաններում մենախոսությունը <<մաքուր ձևով>> հազվադեպ է հանդիպում: Առավել հաճախ այն համադրվում է երկխոսության հետ:

## ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Երկխոսությունը, որպես հաղորդակցման ձև, երկու կամ ավելի զրուցակիցների միջև մտքերի փոխանակում է: Այն հիմնականում նախապատրաստված չի լինում:

Երկխոսության մեջ գործածվող լեզվական միջոցները համամատաբար սահմանափակ են, հաճախ օգտագործվում են զեղջված նախադասություններ, ժեստեր, դիմախաղ: Երկխոսությունը, ի տարբերություն մենախոսության, հնարավոր չէ պլանավորել և նախապատրաստել, քանի որ մասնակիցների արտահայտությունները փոխադարձաբար կախված են միմյանցից: Այս դեպքում զրուցակիցը բովանդակությունը նախապատրաստելու քիչ ժամանակ ունի: Հնարավոր չէ նախապես որոշել երկխոսության ընթացքը, քանի որ այն ընթանում է տարերայնորեն: Եթե զրուցակիցները լավ են պատկերացնում խոսակցության նյութը, հնարավոր է դառնում խտացված ռեպլիկների օգտագործումը, հակառակ դեպքում երկխոսությունն ընթանում է ավելի ընդլայնված: Ռեպլիկ հասկացությունը երկխոսության կարևոր բաղկացուցիչ մասն է: Դրանք զրուցակիցների արտահայտություններն են, որևէ լսված խոսքի մասին զրուցակցի վերաբերմունքն են արտահայտում՝ կամ մղում նրան խոսելու: Ըստ ծավալի ռեպլիկները կարող են բաղկացած լինել ինչպես մեկ բառից, այնպես էլ երկու կամ երեք նախադասություններից: Ամենատիպականը մեկ նախադասությունից կազմված ռեպլիկն է: Ռեպլիկները ծագում են այս կամ այն հաղորդակցական իրադրության մեջ և տարբերվում են ինչպես հաղորդակցական մտադրության դրսևորմամբ, այնպես էլ կառուցվածքով, ինչը պետք է հաշվի առնել դրանք ուսուցանելիս:

Երկխոսության մեջ գործածվող ռեպլիկները չպետք է կրեն միայն հարց ու պատասխանի բնույթ: Աշխատանքի այս ձևը՝ հարց ու պատասխանը, աշակերտների վրա թողնում է այն տպավորությունը, թե զրույցի

ընթացքում նրանք պետք է կամ հարցեր տան, կամ, պատասխանեն այդ հարցերին:

Նրանց մեջ կարող են գործածվել հաստատական կամ ժխտական նախադասություններ, որոնք արտահայտում են՝

--ռեպլիկ-խթան

--ռեակցիա

--հաղորդում զարմանք

A_Sais-tu que...

B_Oui? C'est vrai?

Ռեպլիկ-խթան-կարծիքի արտահայտում՝

A_Je dois dire que ce n'est pas vrai.

-ռեպլիկ-ռեակցիա-համաձայնություն

B-Oui, tu as raison.

-հարցում-ճշգրտում՝

A_Ou՝ est la bibliotheque?

B_Dans cette rue.

A_A gauche ou a՝ droite?

B_A droite.

-հարցում-առաջարկ՝

A_Aujourd'hui nous avons des hotes. Je t'invite aussi.

B_Malheureusement je n'ai pas le temps.

-մղում-համաձայնություն՝

-A-Jouons au football après les lecons

Tre՝s bien.

Ռեպլիկ խթանը և ռեպլիկ-ռեակցիան հանդես են գալիս մի ընդհանրության մեջ, կազմելով երկխոսության միասնություն, որի բաղկացուցիչ մասերը սերտորեն կապված են միմյանց:

Երկխոսության նպատակն է աշակերտներին սովորեցնել այս կամ այն իրադրության շուրջ զրույց վարել՝ գործածելով տարբեր ռեպլիկներ և երկխոսության միասնություններ, արտահայտելով նաև իրենց հուզական վերաբերմունքը հավանությունը, հիացմունքն ու հիասթափությունը և այլն:

Երկխոսության և մենախոսության մեջ մեծ նշանակություն ունի արտահայտությունների քանակը:Սակայն երկխոսություն ուսուցանելիս նպատակահարմար է ուշադրություն դարձնել ռեպլիկների և երկխոսության միասնությունների յուրացմանը:

Օտար լեզվի դասին հաճախ կարելի է լսել դրդապատճառներից զուրկ երկխոսություններ:

__Սա սեղան է:

-Այո,սա սեղան է:

-Սեղանը սև է:

__Ոչ, այն շագանակագույն է:

Ավելի բնական են հնչում այս տիպի երկխոսությունները:

-Տուր ինձ fo գիրքը երկու օրով:

-Ցավոք սրտի չեմ կարող:Գիրքը ինձ պետք է:Կարող ես խնդրել Աշոտից:

-Ես չգիտեի, որ նա էլ ունի այդ գիրքը:

Այս երկխոսության մեջ հարց ու պատասխան ռեպլիկներ չեն գործածվում, այնուամենայնիվ այն հնչում է բնական, քանի որ տեղի է ունենում մտքերի փոխանակում:Երկխոսության ուսուցումը նպատակահարմար է սկսել տարբեր ռեպլիկների յուրացումից:

<u>1-ին փուլ</u>

Օրինակ՝ ուսուցիչը բացատրում է, որ հրավերն ընդունելիս կարելի է համաձայնությունն արտահայտել այս տիպի ռեպլիկների միջոցով՝

-Allons jouer au tennis, veux-tu?

-C'est une bonne idee.

Ուսուցման սկզբնական փուլի վարժություններում գործածվում են միևնույն ռեպլիկները: Այդ նպաստում է ռեպլիկների օգտագործման ավտոմատացմանը:

<u>2-րդ փուլ</u>

Երկխոսության ուսուցման հաջորդ քայլը՝ ըստ սխեմայի զրույց վարելն է:

Այս դեպքում առաջարկվում է երկխոսության թեման, ընտրում բանալի բառերն ու ռեպլիկները, տալիս է երկխոսության սխեման, որոշ բառերի, բառակապակցությունների, ռեպլիկների բացթողումներով: Անհրաժեշտության դեպքում ուսուցիչն աշակերտներին առաջարկում է սխեման լրացնելու նոր տարբերակ: Շատ անգամ աշակերտները չգիտեն՝ ինչպես լրացնել սխեման, կամ որ տարբերակն ընտրել:Նման դեպքում պետք չէ ստիպել աշակերտին, որ նա անպատճառ պատասխանի:

Կարելի է դիմել ուրիշ աշակերտի, բայց հետո նորից անդրադառնալ առաջին աշակերտին և առաջարկել նրան կրկնել ընկերոջ ասածը:

<u>3-րդ փուլ</u>

Երկխոսությունն ուսուցանելու երրորդ փուլը՝ զրուցակցի ռեպլիկն արագ,գիտակցաբար արձագանքելու և խոսակցությունը շարունակելու կարողությունների զարգացումն է:

4-րդ փուլ

Երկխոսության ուսուցման հաջորդ՝ չորրորդ փուլում աշակերտներն ինքնուրույն վարում են երկխոսությունը:

Բանավոր խոսքի ուսուցման և խոսքային կարողությունները զարգացնելու նպատակով ինքս շատ նպատակահարմար եմ գտնում և կարևորում եմ երկխոսությունների կիրառումը դասապրոցեսում, ինչու չէ նաև՝ բնական իրադրությունների վրա հիմնված դասերի կազմակերպում և անցկացում նաև դասարանից դուրս:

Օրինակ՝դպրոցի բակում, այգում,ճաշարանում: Դրանք այն բարենպաստ գործոններն են որոնք խթանում են խոսքային գործողությանը և աստիճանաբար նպաստում են երկխոսության նյութի բարդացմանը.

Օրինակ՝ճաշարան է հրավիրում ընկերոջը.

-Allons a` la cantine, j’ai faim!

-Pourquoi- pas,moi aussi,j'ai faim.

-Donnez-moi,s'il vous plait le menu!

Quel est le menu d'aujourd'hui?

-Voila` le menu,choisissez vous-memes!

-Alors, deux  pizzas et deux jus de pommes.

__Bon appetit!

-Merci, c'est bon!

Կամ վարում ենք առօրյա զրույցներ օգտագործելով տվյալ թեմային համապատասխան բառապաշարով , բառերով և բառակապակցություններով, ինչպես նաև ռեպլիկներով:

Օրինակ՝__Aujourd'hui il y a un match de football,qu'en penses-tu?

-Tu me proposes d'aller voir le match?

-Pourquoi pas!

-C'est une bonne ide'e,mais a` quelle heure?

-A sept heures du soir.

-Je veux bien, mais je crois que c'est trop tard.

-Alors...?

-Bon,je suis d'accord.

Եվ այսպես կարելի է շարունակել, ընդարձակելով երկխոսությունը:

Խոսքային իրադրություններն անհրաժեշտ է միշտ փոփոխությունների ենթարկել: Այն զարգացնում է աշակերտների կողմնորոշվելու կարողությունն իրադրության մեջ:

Երկխոսությունը զարգացնելու լավագույն միջոցներից մեկն է հանդիսանում դերային խաղերը:

## ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂ

Մյուս մեթոդների համեմատությամբ,դրանք ունեն բնորոշ մի առանձնահատկություն: Դերային խաղերի նպատակն է՝ ինչ –որ բան սովորեցնել աշակերտներին, մարզել և զարգացնել նրանց մտավոր կարողությունները,մշակել բնավորության լավագույն գծեր, ինչպես նաև ձևավորել և զարգացնել հարց ու պատասխանի կարողությունը:

Դերային խաղերն ունեն խնդիր, գործողություն, կանոն, արդյունք խաղի եզրափակում, ավարտ:

Յուրաքանչյուր դերային խաղում առաջադրվում է այնպիսի խնդիրներ ,որոնց լուծումը աշակերտներից պահանջում է որոշակի մտավոր լարվածություն, մտավոր ջանքեր: Կատարելով խաղի խնդիրը աշակերտը ակտիվացնում է իր մտածողությունը, մարզում է իր հիշողությունը, դիտողականությունը: Խաղի գործողությունը խաղ–խնդրի լուծման միակ միջոցն է : Յուրաքանչյուր դերային խաղում խնդիրը լուծվում է գործողության միջոցով, որը որոշում և կազմակերպում է յուրաքանչյուր աշակերտի վարքը, միավորում է աշակերտներին միասնական կոլեկտիվում:

Դերային խաղում գործողությունը ճիշտ և հստակ որոշված է: Այն կարող է լինել բազմազան ,սակայն խաղի խնդրի հաջող լուծման համար պետք է բավարարի երկու կարևոր պահանջների՝ անպայմանորեն ենթարկվի խնդրին և այդպիսով կատարի խաղի ուսուցողական նպատակը: Լինի զբաղեցնող և գրավիչ ընդհուպ մինչև խաղի վերջը:

Դերային խաղերի բնորոշ առանձնահատկությունը ուսուցողական տարրերի կապն է խաղի տարրերի հետ: Լավ կառուցված դերային խաղում աշակերտները չպետք է կասկածեն, որ իրենք ինչ–որ բան են սովորում: Այստեղ գործողությունը մեծ կամ փոքր չափով պետք է թաքցնի խաղի ուսուցողական, դերասանական նպատակը:

Դերային խաղի անցկացման ընթացքում աշակերտները միշտ պետք է զգան, որ իրենք խաղում են, և ոչ թե սովորում են: Ամեն մի երեխայի հարազատ է խաղը և նա սիրով մասնակցում է այդ պրոցեսին:

Հաղորդակցական և անհատական գործունեության կարողությունների զարգացման, ուսուցման նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու համար ինքս էլ եմ նպատակահարմար գտնում ուսուցումը կազմակերպել խաղային, մրցակցային իրավիճակներ ստեղծելու միջոցով:

Ցանկացած բարդ ֆերականկան վարժություն, կամ ոչ այնքան հետաքրքիր տեքստ կարելի է ուսուցանել խաղային իրավիճակներով: Հաճախ օգտագործում եմ փոքրիկ տեսաֆիլմեր առաջադրելով խաղի կանոնները, որն աշակերտների մոտ առաջացնում է ակտիվություն, մոտիվացիա: Կամ կազմակերպում եմ դերախաղեր՝նախօրոք պատրաստված սցենարով:

Նախապես պատրաստում եմ ուսումնասիրվող թեմային առնչվող և որևէ իրավիճակին բնորոշ հնարավոր երկխոսությանը հարմար բառեր և արտահայտություններ:

Աշակերտներն աշխատում են զույգերով՝ խաղարկելով տրված դերերը: <<Ֆրանսիա>> թեմայի շուրջ ցանկանում եմ այցելել Փարիզ:

-Էֆելյան աշտարակ-զբոսաշրջիկներ

-թարգմանիչ-հանդիպման մասնակիցներ

-տեղեկատվության որոնում զբոսաշրջության գործակալությունում

-հյուրանոցներ-վարձով տրվող բնակարաններ

-տեսարժան վայրեր-երթևեկության միջոցներ և այլն:

Այս ամենի շուրջ ծավալվում է դերախաղերով երկխոսություններ:

Շատ կարևոր է ճիշտ հոգեբանական միջավայր,անկաշկանդ

մթնոլորտ ստեղծել դասարանում, երբ ոչ մեկը մյուսի սխալ արտահայտած մտքի վրա չի ծիծաղում և քննարկվում է նույնիսկ ոչ ճիշտ և ոչ լիարժեք պատասխանները: Դրան կարելի է հասնել միայն այն ժամանակ,երբ դասասենյակում ընդունելի են տարբեր հաղորդակցական ոճեր:

Խաղը լուրջ ազդեցություն է գործում մտքի զարգացման վրա: Խաղալիս երեխան սովորում է ընդհանրացնել առարկաներն ու գործողությունները, օգտագործել բառի ընդհանրացված նշանակությունը և այլն:

Խաղային իրադրության մեջ ներգրավելը պայման է հանդիսանում անձի մտավոր գործունեության տարբեր ձևերի զարգացման համար:

Եզրակացություն

Ամփոփելով՝ ցանկանում եմ նշել,որ դպրոցում դասավանդման բոլոր փուլերում, տարրական, միջին և, թե ավագ դպրոցում աշակերտների բանավոր խոսքի ուսուցման, բառապաշարի հարստացման, լեզվական կարողությունների զարգացման նպատակով վերը թվարկված բոլոր մեթոդներն էլ կարևոր են և օգտակար:

Յուրաքանչյուր մեթոդ յուրովի է զարգացնում և նպաստում է խոսքային գործունեության ուսուցման և կատարելագործման վրա: Սակայն դպրոցում երկարամյա աշխատանքային իմ փորձը ցույց է տվել, որ բանավոր խոսքի զարգացման և առհասարակ, ֆրանսերենի խորը իմացության հարցում հաջողություններին են հասնում այն աշակերտները, որոնք մշտապես և համառորեն աշխատում են բառարաններով:

Ես համոզված եմ, որ բառարանային ամենօրյա և հետևողական աշխատանքի արդյունքում սովորողների հիշողության մեջ արմատավորվում են նոր բառեր, որոնց միջոցով էլ նրանց մոտ աստիճանաբար զարգանում են բառակազմական ստեղծագործական և վերարտադրողական կարողություններ և հմտություններ:

Եվ վերջապես, բանավոր խոսքի ուսուցումը բարդ, բազմաբաղադրիչ երևույթ է, որի բոլոր բաղադրիչները հանդես են գալիս միասին, որպես մեկ ամբողջություն: Սովորողների բանավոր արդյունավետ հաղորդակցությունն ապահովելու համար, այն անհրաժեշտ է ձևավորել ու զարգացնել ուսուցման բոլոր աստիճաններում, կիրառելով բացարձակապես խոսքային կարողությունների բոլոր մեթոդներն ու հնարները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1 Ամիրջանյան Ց. Մանկավարժություն Երևան 2005թ

2 Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար Երևան 2004թ.

3 Օտար լեզուները Հայաստանում 2009թ.

4 Արշակյան Ա. Օտար լեզվի դասավանդման մեթոդիկա Երևան

5 Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները Երևան 2004թ.